

ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԸ



ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՄ ՄԷՋ

Յորելինական կեղր . Յանձնախումբը երէկ հաւաքուեցաւ Պալաթիոյ Խորհրդարանը և զբաղեցաւ Մեծ Յորելեանին տօնակատարութեան մարտամասնութիւններովը : Խորհրդակցութեան մասնակցեցաւ նաև Կոմիտաս վրդ . Այս առթիւ իրենց համարատուութիւնը ըրին այն Մասնախումբերը որ նք զանազան պաշտօններու յանձնառու եղած էին : Կարգացուեցաւ Ազգ . Կ'զր . Վարչութեան Խառն ժողովին մէկ պաշտօնագիրը , որով կը ծանուցուեք պատրաստուած ծրագրին Հաւերացուած ըլլալը , ինչպէս նաև յապաւումն ու յաւելումները : Յանձնամողովը իր ցաւը յայտնեց ծրագրին մէջ թափորի և ջահագնաց սթեան մասները ֆնջուած ըլլալոն համար , նոյնպէս որոշեց ու տեղ տալ թէ Բարձր . դաս սրաններու վեցական ուսանողներու եկեղեցի բերուելու պարագ ային խճողում առաջ պիտի զայ . հետեւարար անոնց փոխար էն յարմար է որ հրաւիրուն վարժարաններու տեսուչներն ու աւագ ուսուցիչները :

Յանձնամողովին կարգադրութեամբ Օշականի նկարը պարունակող հազարութիւն քարգուստալներ պիտի տպագրուին թաղերը և գտառները ըրուելու համար և պիտի ծախուին 40 ֆարայի : Գեղարուեստական գեղեցիկ «Քօ-քարտաններ» եւս պիտի պատրաստուին :

Կը լսենք թէ հակառակ Վարչութեան արգելքին թաղերէ ոմանք դիմած են պատկանեալ պաշտօնատանց թոյլատրելու համար միայն իրենց թաղին մէջ թափորն ու ջահագնաց սթիւնը :

* * * Հայ գրերու գիւտի և հայ տպագրութեան Մեծ Յորելեանը պիտի տօնուի Շաբաթ (Հոկտ . 12/25) գիւերը ժամ 9 ու կէսին (Ը . Ե .) Փըթի Շանի ձմեռնային թատրոնը , նախաձեռնութեամբ Հ . Յ . Դաշնական Աւանողական Միութիւններու և նախագահութեամբ Կոմիտաս վարդապետի : Պիտի Ըլլան բանախօսութիւններ օրուան տօնին շուրջ , պիտի երգէ կոմիտաս վարդապետ : Զութակ , Դաշնակ , կենդանի պատկեր , եւայլ :

Մանրամասնութիւնները կը հրատարակուին շուտով :

Հ . Յ . Դաշնակցութեան Աւանողական , Միութիւն
Ս . Դ . Հնչակեան " "